ՖՈՐՍԿԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլել ա, չի ըլել մի ֆորսկան մի քաղաքի միչում։ Շատ ֆորս գնալիս ա ըլում։ Սա մի ախչկա սիրած ա ըլում։ Վերչը շատ չալիշ ա գալի, ախչկա տերը տալիս չի, զոռագի փախցնում ա ախչըկան։
Ախչկա ախպերտինքը ման են գալի, որ գտնեն իրանց քվորը փախցնողին, սըպանեն։ Էս տղեն իմանում ա, որ իրան ախըրը չկա, վերչը սպանիլ պտեն, կնիկը վեր ա ունենում, էդ երկրիցը փախչում։
Գնում ա մի անվերի վերանա տեղ, իրա հմա մի տուն շինում, ապրում։ Սա էն ա իրա արհեստը էն ա ըլում, որ ռավոտը ֆորս ա գնում, ըիկունը գալի։ Սա թե շատ ա կենում, թե քիչ ա կենում ընդի, էն սամթումը իրեք ախպեր դև են ըլում. էս դևերի մինը օրի մի վախտը տենում է, որ էդ ձորում մերու միջին մի ծուխ ա վեր ըլում։
Ասում ա.— Էսքան վախտը մենք ըստի ման ենք գալի, ըստի ծուխ տեհել չենք, էս ի՞նչ մարդ ա, որ էկել ա ըստի ծուխ ա արել։ Կըլի գնանք մտիկ տանք, տենանք սա իսա՞ն ա, ջանավա՞ր ա, էս ի՞նչ բան ա։
Ախպերտինքն ասում են.— Գնա՛նք։
Գալիս են տան դուռը, տենում են մի գեղեցիկ հարսը տան միջին։
Մենձ Դևը ասում ա.— Սա օղլուշաղ ա, կվախի, դուք հեռացեք, ես մտնեմ, տենամ ով ա։
Ախպերտինքը հեռանում են, նա նի ա մտնում էդ հարսի հետ խոսում ա, ասում ա.— Ա՛ հարսը, էդ ի՞նչ խիզան ես, որդիան ես, ի՞նչ ես։
Էն հարսը խոսում չի. մի անգամ էլ ա հարցնում, թե.— Խոսա՛, ինձանե վախիլ մի, ես քե հավատարիմ կլիմ,— ասում ա։
Հարսը, որ տեղը շատ նեղում է, ասում ա.— Ես մի անիրավ մարդ ունեմ, որ շատ զոռ գյուլլա գցող ա, էն ինձ փախցրել ա, բերել ըստի։ Հըմի կիմանա քու ըստի գալը, համ քեզ կսպանի, համ էլ ինձ, քաշվի՛ ըստիան։
Էս Դևի սերն ընկնում ա էս հարսի վրա, ոչ գիտի դուս ըլի, ոչ գիտի մնա տանը։
Սա իրան մտքումն ասում ա. «Գնամ ախպորտանցըս հետ մասլահաթ անեմ, գամ»։ Սա դուս ա գալի ախպորտանցն ասում ա, թե.— Սա մի գյուլլա գցող մարդ ունի, որ հեռվից մեզ կվնասի, մոտիկ չի գալ, որ բռնենք, խեղդենք, կնիկն էլ մի շատ գեղեցիկ հարսն ա։
Ախպերտինքն ասում են.— Ման գանք էդ տղին գտնենք, հեռվից տենանք ինչ թավուր մարդ ա, թվանք կա՞ վրեն, նոր մեր բանը տենանք։
Դրանք էդ խորուրդումն ին, էդ ըիգունը էդ Ֆորսկանը էկավ տուն, էկավ տեհավ կնկա քեֆը խարաբ ա։
Թե.— Ա՛յ կնիկ, էդ ի՞նչ խաբար ա։
Էլ էդ դևերի անումը տվուց ոչ։
Թե, բա.— Ինձ բերել ես մենակ դրել ես ըստի, ցերեկը գնում ես հանդերը ման գալի, ես մենակ ըստի մլորվում եմ, մի զրիցաբնկեր չկա կշտիս։
Թե, բա.— Ա՛յ կնիկ, ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ։
Թե.— Մի կատու էլ ա կա ոչ, որ հետը մըլոլ անեմ, պար ածեմ, գոգումս դնեմ, ժամանակ անցնի։
Ասում ա.— Էքուց էվեթ կերթամ քիզ հմա որդիան որ ըլի, մի կատու կգտնեմ։

Ռավոտը վիկացավ ու գնաց կատվի ման գալու, էլ նա կարաց ոչ որ շենլիկ գա, որ կատու տանի. մի խարաբա կար, գնաց էդ խարաբեն, տեհավ հրեսիկ մի կատու ըստի կլավում ա։ Էս կատվին բռնեց բերուց տուն։
Թե.— Ա՛յ կնիկ, ուզածդ բերել եմ։
Կնիկը շատ ուրախացավ։
Մարդ ու կնիկ էդ կատվին մի որդու ղդար սիրեին։ Հացը, որ ուտելիս ըլեին, կատուն հետներուն ուտեր։
Մի քանի օրից եդը էս Դևը ախպորտանցը ասավ.— Ես գնում եմ էն հարսի կուշտը, դուք ձեզ հմա կացեք ըստի։
Էս Դևը էկավ ռավոտը, տեհավ մարդը գնացել ա ֆորսի, էկավ էն հարսին բարով էրետ, էդ հարսը խոսաց ոչ։
Որ շատ էս հարսի տեղը նեղեց, հարսն ասավ.— Չէ՞ որ քեզ ասի՝ սըպանիլ կտամ, գալ մի, ընլի՞ ես էկել։
Սա սկսեց սրան միննաթ անիլը.— Քեզ սպանեմ, ղիմիշ չեմ անում, խնդրում եմ՝ միավորվենք մենք իրար հետ։
Դա ասավ.— Պա՜, պա՜, պա՜, էդ զրիցը մեկ ասիր, մեկ էլ չասես։
Մինչև կեսօր խնդրվեց, եդնա սկսեց վախեցնել։ Խյուլասա՝ կամքը կատարեց։ Էդ կնկա սերը ընկավ էդ Դևի վրա, իրա մարդուց ավելի ա սիրում։ Էրկու-իրեք օր գնաց, էկավ։
Մին օր էլ կնիկն ասավ.— Ըտենց գնալով-գալով Ֆորսկանը քե կտենա, կսըպանի. բի մի բան անենք, որ միշտ ըստի ըլիս։
Բերին տան ղրաղին մի ֆոր կտրեցին, քշերը մտավ Դևը էդ ֆորը, ռավոտը վեր էլավ, ըտենց միխելի ժամանակ անց կացրին, եդնա մի օր Դևն ասավ.— Ըսենց չվել ե՞փ վախվխելեն ապրինք, ես մի ծաղկի տեղ գիտեմ, ընդունց որ ցանենք, համեմի պես դուս կգա, ընդուցե որ նրա բաժինի մեջ քցենք, կուտի, կմեռնի։
Սրանք էդ համեմը ցանեցին էն ֆորի ղրաղին, դուս էկավ, կնիկը հաց շինեց, իրանց բաժինը ինքն ու Դևը կերան, կշտացան, նրա բաժնի մեջ գցեցին ու կրակի ղրաղին ծածկեցին, որ Ֆորսկանը գա ուտի։ Էկավ Ֆորսկանը, նստեց, որ հացն ուտի, բաժինը դրուց կնիկն աղաքին։
Կատուն վազեց գոգը նստեց։ Ֆորսկանը, վի կալավ պատառը, որ բերանը տանի, կատուն տվեց չանկով վեր գցեց, մի անգամ էլ վի կալավ, էլի կատուն չանկով խփեց, իրեք անգամ վի կալավ՝ իրեք անգամ էլ կատուն տվուց վե գցեց։
Կնիկը նեղացավ ըտի, թե.— Անտեր մնա դա, թողում չի հաց ուտես, վրա արա դենը գցի։
Ֆորսկանը կատուն ղրաղին դրուց, մի պատառ վի կալավ դրուց աղաքին, որ ուտի, կատուն թիքեն կերավ թե չէ՝ տրաքեց, Ֆորսկանը տեղիցը կաղնեց, ասավ.— Էս ի՞նչ բան էր։
Կնիկն ասավ.— Գիտում չեմ։
Ասավ.— Ար՛ի քու էփած կերակուրիցը դու կի, որ ես էլ ուտեմ։
Ասավ.— Ես կերել եմ, դու ուտում ես՝ կի՛։
— Չէ՛,— ասավ,— ըստի մի հնար կար, որ կատուն տրաքվեց, դու պտի ուտես, որ եդն էլ ես ուտեմ։
Ինչ արավ, արավ ոչ՝ կնիկը մոտ չէկավ կերակրին. տեղիցը կագնեց ու թուրը քաշեց, որ կնկանը սպանի, Դևը ֆորումը «ա՛խ» քաշեց։
Որ «ա՛խ» քաշեց, Ֆորսկանը լսեց, իմացավ, որ ընդի իսան կա։ Կնկանը թողեց, մտիկ արավ, տեհավ, որ ֆորումը մի Դև կա, Դևին էլ կտորեց, կնկանն էլ ու ածավ ֆորը։

Ընդիան ինքը թողուց ու փախավ։ Թե հիմի գալիս ա իրանց քաղաքը, ախպորտանցե ա վախում, թե մնում ա էն սարերումը՝ Դևի ախպորտանցե ա վախում. գնաց հասավ մի սար, մի ծառի տակի նստեց։ Դա թող ըտի նստած մնա, մենք խաբարը Դևի ախպորտանցե տանք։
Ախպերտինքը միտք արին, թե.— Գնանք տենանք մեր ախպերը ի՞նչ հալի ա։
Էկան տուն, տեհան՝ ոչ ով չկա։ Ման էկան տունը, տեհան, որ մի ֆոր կա, մտիկ արին տեհան, որ իսանի ջանդակ կա մեջը։ Պտրուցք արին, տեհան իրանց ախպերն ու մեկ էլ մի հարս են, էրկսի ջանդակը իրար վրա ածած ա։
— Հա՛յ մադաթ,— ասին դևերը, դուս էկան,— մեր ախպոր սպանողին մենք գտնենք ոչ սպանենք ու արինը խմենք՝ մեր մոր կաթը մեզ հարամ ա։
Ասին ու ընկան սարերը, էկան տեհան, որ էդ տղեն մի ծառի տակ նըստած ա։ Սա տեհավ, որ էս դևերը գալիս են, տեղիցը վեր կացավ, թվանքը լիքն էր, հմա էլ գյուլլա-բարութ չունի։ Դևերը սրան տենելուն քիմի, ասին.— Ժաժ մի գալ, քու վերչընն ա։
Սա քաշեց թվանքը մնին էրետ սպանեց, մինը վեր ընկավ, մինը մնաց սաղ։ Տեհավ, որ գյուլլա բարութ չունի, սաղ մնացած դևը իրան վրա ա գալի, թողեց փախավ։ Ինքը գնաց, դևը՝ եդնեն։ Թե շատ գնաց, թե քիչ գնաց, մեկ մենձ ջրի ռաստ էկավ. տեհավ, որ դևը հասնում ա, ընկավ ջուրը։ Սա ջրով փախչում ա, դևն էլ ղրաղից ա գնում։ Էս ջուրը խառնվեց ծովին, դևը տեհավ, որ տղեն ծովն ա ընկնելու, ասավ. «Ես էլ ընկնեմ ջուրը՝ բալքի ընչկելա ծովը հասնելը բռնեմ»։ Ընկավ ջուրը, չկարաց բռնի, էլի էն լեղ էրետ, գնաց։ Գնաց ծովը մտավ։ Տղեն հասավ ծովը, դևն էլ եդնեն։ Սա գնաց տեհավ, որ մի գյամի գալիս ա իրան թուշը, սա հրաքաթ արավ, լեղ էրետ, գնաց գյամու օղերից բռնեց։ Որ բռնեց՝ գյամին հակվեց դբա էս տղեն։ Գյամչին տեհավ, որ գյամին թեքվում է, դուս էլավ կտուրը, չորսի կռանը մտիկ արավ, տեհավ մի իսան գյամու օղիցը բռնել ա, գալիս ա, մի դև էլ եդնուց գալիս ա։ Գյամչին մեղքացավ, չանգյալներ գձեց, տղին քաշեցին գյամու մեչը։ Դևն էկավ, գյամուն տվուց, ուզեց, որ բատմիշ անի, գյամին փախավ գնաց, դևը մնաց։
Տղին տարան հանեցին ղրաղը, ասին, թե.— Էս ի՞նչ էր էկել գլխիդ։
Էս տղեն սկսեց իրան գլխին ինչ որ էկել էր, նաղլ անիլ։ Գյամչին, որ լսեց, ասեց.— Լավ բոլ հունարով մարդ էս ըլել դե՛, գնա՛ս բարով։
Թողեց սրան ծովի ղրաղին, ինքը գնաց։ Տղեն վեկացավ, ծովի էն ղրաղը մի քաղաք կար, գնաց էդ քաղաքը, մի քյասիբ մարդի տուն ղոնաղ էլավ, էս քյասիբ մարդը ժառանգ չուներ, եփ իմացավ, որ էս տղեն հեր ու մեր չունի, իրան ժառանգ արավ։
Թե շատ կացավ, թե քիչ կացավ էդ տղեն էս քաղաքումը, էդ աստոծ գիտե։ Էս քաղաքի թքավորը մհացավ։ Սրանք մի առժամանակ կացան անթաքավոր, եդնա բերին դովլաթ ղուշին գցեցին, որ ում գլխին վեր գա՝ նրան թքավոր դնեն։ Էս ղուշն էկավ, մեր քյասիբ տղեն մի քարի վրա, հեռու նստած էր, էկավ ղուշը գլխին վեր էկավ։
Էկան էս տղին վերհատեցին, թե.— Դու ըստի ի՞նչ ես շինում, ղուշը շըշկլեց,— ասին,— էս ի՞նչ մարդ ա, որ սրան թքավոր դնենք։
Ղուշը եդ տարան, սրան էլ ծեծեցին, կորավ գնաց։ Եդ տարան ղուշը մի սհաթ պըհեցին ձեռներին, եդնա էլի գցեցին։ Ղուշը վեր էլավ, պտիտ էկավ, էն ղատար խալխը թողուց, գնաց քաղաքից դուս էլի էն տղի գլխին վեր էկավ։
Ղշի եդնա գնացող մարդիկը գնացին տեհան էլի իրենց ծեծած տղի գլխին ղուշը վեր ա էկել. էս տղին էնքան ծեծեցին, որ բանից էլավ, ու ասին թե.— Կորի՛, գնա՛ որդի էլել ես՝ ընդի։
Սա էլ էկավ իրա հորացվի տունը։ Էլի ղուշը պտիտ գալով, պտիտ գալով էկավ ու էս քյասիբ մարդու տան հերթիկովը նի մտավ, էլի էն տղի գլխին վեր էկավ։ Էս ղշի եդնեն էկող մարդիկը տեհան, որ էլի էն քյասիբ մարդու գլխին կաղնեց։ Տարան իրանց հմա թքավոր դրին։

Թքավոր դրին, հմա էս տղեն ասավ.— Ես թքավոր կըլեմ մի պայմանով, որ ես պետք է կնիկ չուզեմ։
— Չի՛ կարելի,— ասին,— դու պետք ա ունենաս կնիկ, որ քեզանե ըլի ժառանգ, քեզանե եդնը նա թաքավորութին անե։
Ինքն էլ մտածեց, որ խելացի զրից են անում, ասավ.— Իրեք ամիս ինձ ժամանակ տվեք, ընդով ես ձեզ պատասխան կտամ։
Ասավ.— Տեր աստոծ, եփոր էս փառքին տիրացա, դու մի հալալ կաթնակեր ինձ ղսմաթ անես, որ էն ղոյբաթն անի ոչ։
Դա էդ իրեք ամսեն մեչը մի քշեր էրազումը տեհավ Սպահանա քաղաքում մի թքավորի ախչիկ դրան բութա տվեց։ Ախչիկն ընդի տեհավ, տղեն՝ ըստի։
Ըստիան դա ռավոտը վի կացավ լիսին, իրան նազիրվեզիրին կանչեց, ասավ.— Զորք պատրաստեցեք, ես տեղ պտիմ գնալ։
Զորք պատրաստեցին, սա վեկալավ, գնաց։ Գնաց էդ քաղաքումը դուս էկավ։ Սա էս կոնիցը քաղաք մտնելիս, էն կոնիցը թաքավորի ախչիկը իրան ղարավաշներով բաղն ա գալի։
Կաղնում սեյր ա անում, ամա տենուլնուն քիմի իրուր ճընանչեցին, որ երազումը իրուր տեհել են ու խոսք են տվել, որ իրուր առնեն։ Սա որ դըբա քաղաքն ըղու էլավ, ախչիկն էլ եդ դառավ, գնաց տուն, վեր էլավ իրանց բալկոնը, սկսեց սեյր անել։
Տղան էկավ թքավորի ամարաթը, վեր էկավ։ Թքավորը դրան ընդունեց, ասավ.— Ի՞նչ մարդ ես և ինչի հմա ես էկե։
Տղեն ասավ.— Ես ֆլան քաղաքի թքավորն եմ, երազումս քու ախչիկդ ինձ դուր ա էկե, էկել եմ, ուզեմ, կըտաս՝ կառնեմ, չես տա՝ վեր կկենամ, կերթամ։
Թքավորն ասավ.— Էդ իմ ախչկա բանն ա, իրան կհարցնեմ, թե ուզեց՝ կտամ։
Ախչկանը կանչեց, հարցրուց, ախչիկն ասավ.— Ես էլ էրազումս էդ տղին բութա եմ տվե, էսօր էլ հենց որ դրան տեհա, ճնանչեցի, որ իմ երազումը տեհած տղեն ա։
Ըտեղ նշան են առնում, նշան տալի ու բազում պատրաստութին են տենում, որ գնան տղի քաղաքը, հըրսանիք անեն։
Ստիան ճընապար են ընկնում, գնում։ Ճընապարին թքավորն ու նշանածը մի տասը հոգով լավ ճամփով են գնում, իսկ ղոշունը կրճաղաք ճամփով ա գնում։
Էս վախտին տասնէրկու դե վրա են ընկնում թքավորի վրա, որ թալան տան. սրանք որ ոտն են անում, որ թալանեն, թքավորն իրա ֆորսորդութինը միտն ա բերում, ասում ա.— Հարիր տարվա սիլահը մի օր կհարկավորի։
Թաքավորութինը եդ ա դնում, հետի մարդկանցից մի թվանք ա առնում, տենում ա, որ բոլորը մոլորեցին.— Էլ էն տեղը չի,— ասում ա,— ու գյուլլա անում, տասէրկու դնին էլ ջարդում ա, տասէրկուսի գլուխն էլ կտրում ա, հետը տանում։
Որ ղոշունին հասնում են, ասում ա.— Դուք ի՞նչ մուխաննաթութին արիք, որ իմ եդնա չեկաք, էս բանը իմ գլուխը բերիք։
Նրանք էլ մեղա էկան, թե. «Ամառվա օր էր, շոգ էր, կրճաղաք ճամփով իջանք»։
Գալիս հասնում են իրանց քաղաքը, սինոդապետները իմանում են, որ թքավորը մենակ ճամփին տասնէրկու դնի սըպանել ա, գըլխընին էլ կտրել բերել, ասել են, թե. «Էս թքավորը շատ մենձ հունար ունի»։ Բերում են օխտը օր, օխտը քշեր հրսանիք են անում, ուտում, խմում, քեփ անում։
Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։ Չարըն ընդի, բարին ըստի։
Աստծանե իրեք խնձոր վեր էկավ. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ ալամ աշխարքին։